

Մեծ հույսեր ունեմ, որ մեկ տարվա ընթացքում կկտրենք Կապանի օդանավակայանի ժապավենը. Վահե Հակոբյան

Կապանի օդանավակայանի վերագործարկման ուղղությամբ ուսումնասիրություններն ավարտվել են և արդեն իսկ որոշում է կայացվել այն վերականգնել: Այս մասին Tert.am-ի հետ զրույցում ասաց Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը: «Մեծ հույսեր ունեմ, որ մենք մեկ տարվա ընթացքում Կապանի օդանավակայանի ժապավենը կկտրենք», - նշեց նա: Հակոբյանը նաև խոսել է օդանավակայանի վերագործարկման ներդրումների և դրա նշանակության մասին:

- Պարո՞ն Հակոբյան, վերջերս դուք հայտարարել էիք, որ Կապանի օդանավակայանի հնարավոր վերագործարկման ուղղությամբ ուսումնասիրություններ են սկսվել: Ի՞նչ փուլում են այժմ այդ ուսումնասիրությունները:

- Այո, մենք ավիացիայի գլխավոր վարչության մասնագետների հետ համատեղ ուսումնասիրություններ էինք անում և արդեն ավարտել ենք: Մեզ համար ամենակարևորն այն էր, որ հասկանայինք, թե թռիչքուղին ինչ վիճակում է գտնվում: Այն երկար տարիներ չէր շահագործվել, բայց, փառք Աստծո, թռիչքուղին գտնվում է բավականին բարվոք վիճակում: Կան լոկալ խնդիրներ, որոնց ուղղությամբ աշխատանքներ կկատարենք և այն կբերենք նոր, շատ լավ վիճակի: Ե՛վ իմ կողմից, և՛ Սյունիքի զարգացման և ներդրումների հիմնադրամի, և՛ ամենակարևորը՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի ղեկավարության կողմից արդեն իսկ որոշում է կայացվել վերականգնել Կապանի օդանավակայանը:

-Որքա՞ն ներդրում է անհրաժեշտ օդանավակայանի վերականգնման համար:

-Ես մոտավոր թիվ կարող եմ ասել, բայց այն իրականությանը շատ մոտ է: Շուրջ 2 մլն դոլար է անհրաժեշտ:

-Նախկինում ևս մարզպետի մակարդակով հայտարարվել է, որ աշխատանքներ են տարվում Կապանի օդանավակայանի վերագործարկման ուղղությամբ, որքանո՞վ է հնարավոր, որ այս անգամ ծրագիրն իրականություն կդառնա:

-Ես չգիտեմ նախկին մարզպետներն ինչ են ասել, ինչ են արել, բայց մինչև այսօր ոչինչ արված չի եղել: Մենք արդեն իսկ սկսել ենք շինարարական աշխատանքներ կատարել օդանավակայանում: Ինչ վերաբերում է հավանականությանը, ես մեծ հույսեր ունեմ, որ մենք մեկ տարվա ընթացքում արդեն ժապավենը կկտրենք:

Միայն մի խնդիր կա. մենք, ցավոք, չենք կարող ռեակտիվ ավիացիա օգտագործել: Ռեակտիվ ինքնաթիռը մեծ շրջան պետք է կատարի վայրէջքի համար, որով մտնելու է և՛ ազատագրված տարածք, և՛ մասամբ մեր ոչ բարով հարևանի տարածք: Դա իր մեջ մեծ վտանգ է պարունակում: Այդ իսկ պատճառով մենք օգտագործելու ենք տուրբոպտուտակային շարժիչով, բայց ժամանակակից ինքնաթիռներ, որոնք վայրէջքի համար խնդիր չունեն մեծ մանևրումներ անելու:

-Ի՞նչ ռազմավարական նշանակություն կարող է ունենալ օդանավակայանի վերագործարկումը: Կարո՞ղ է այն ինչ-որ չափով փոխարինել Արցախի օդանավակայանին:

–Այո, այն մասամբ կարող է փոխարինել Արցախի օդանավակայանին, բայց ամենակարևորն անձամբ իմ և մեր գործընկերների համար այն է, որ օդանավակայանի շահագործումը մեծ աշխուժություն կբերի մարզ և մարզկենտրոն: Նաև ներդրողների, բիզնեսամենների հոսք կլինի, որոնք այսօր խուսափում են 4–5 ժամ մեքենայով երկար ճանապարհ անցնել: Իսկ եթե իրենք իմանան, որ 40 րոպեում կհասնեն մարզկենտրոն, համոզված եմ, որ դա մեծ ակտիվություն կբերի մարզ: Բացի դրանից՝ գիտեք, որ մարզը ֆուտբոլային ակումբ ունի՝ «Գանձասար Կապանը»: Մեր թիմն այս տարի հավակնում է և՛ չեմպիոնության, և՛ Հայաստանի գավաթի հաղթողի կոչմանը, և, անպայման, այս տարի միջազգային մրցաշարերին կմասնակցի: Մեր գերնպատակն է այդ մրցաշարի խաղերը կազմակերպել Կապանում:

Ճիշտ է, այսօր ՈւԵՖԱ–ի կողմից որակագրված է մարզադաշտը, բայց մենք բոլոր ջանքերը գործադրելու ենք նաև այդ մարզադաշտը համայնքին վերադարձնելու համար: Այն հիմա մասամբ գտնվում է անհատի ձեռքում, որը չի կատարում որևէ աշխատանք, ինչի հետևանքով մարզադաշտն անմխիթար վիճակում է: Մենք այժմ կատարում ենք ՈւԵՖԱ–ի պայմանները, որ մարզադաշտը համապատասխանեցնենք ստանդարտներին:

Հակոբ Ասլանյան